ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող 014 մասնագիտական խորհուրդ Արմինե Էդվարդի Մեժլումյանի «Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում (Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի նյութերով)» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Կառավարչական հաշվառման զարգացման ներկա փուլը բնորոշվում է հաշվետվողականության ընդլայնմամբ. որոշումներ կայացնելիս կազմակերպությունների տնտեսական գործունեության տեղեկատվության թե՛ ներքին, և թե՛ արտաքին օգտագործողները պահանջում են ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական տեղեկատվությունն արտացոլող ցուցանիշներ: Կազմակերպությունների գործընկերներին հետաքրքրում է ինչպես գործարարության ֆինանսական կողմը, այնպես էլ դրա շուրջ ձևավորվող ձեռնարկատիրական համբավը: Եվ եթե ֆինանսական ավանդական հաշվառումը ներկայացնում է միջազգային ստանդարտներով կարգավորվող ֆինանսական ցուցանիշների հաշվետվություններ, ապա ոչ ֆինանսական տեղեկատվությունը գործնականում անհնար ներկայացնել ֆինանսական հաշվետվություններով, և այդ գործառույթի իրականացումը փաստորեն փոխանցվում է կառավարչական հաշվառմանը:

Կամայական կազմակերպությունում կառավարչական հաշվառման հաշվետվողականության համակարգի կազմավորումը և գործարկումն օրակարգային անհրաժեշտություն է, այն, ի թիվս ամենատարբեր ուղղությունների, առնչվում է նաև սոցիալական գործարարության, բնապահպանական գործունեության, կորպորատիվ շահերի բավարարվածության, աշխատողների իրավունքների և առողջության պաշտպանության ոլորտների հետ: Ընդ որում, այդ հաշվետվողականությունը նպատակահարմար է դառնում կազմելու համադրելիության սկզբունքով այնպես, որ հնարավորություն ստեղծվի իրականացնելու համեմատական վերլուծություն և

գնահատելու կազմակերպությունների ձեռքբերումներն ու բացթողումները ոչ ֆինանսական գործունեության տարաբնույթ ոլորտներում:

Ագրոպարենային համակարգը հայաստանյան տնտեսության առավել կարևոր, մրցունակ և հեռանկարային ոլորտներից է: Դրանով հանդերձ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, համակարգում գործունեություն ծավալող մեծ թվով կազմակերպություններում կառավարչական հաշվառման համակարգեր ներդրված չեն, առավել ևս՝ ներքին վերահսկողական գործառնությունները հաճախ իրագործվում են առանց բավարար տեղեկատվական հենքի: Որպես հետևանք՝ կայացվում են ոչ օպտիմալ որոշումներ, որոնք հանգեցնում են չարդարացված և ոչ պարտադիր կորուստների, իսկ ամբողջ կազմակերպության մասշտաբով՝ անարդյունավետ գործունեության:

Այս առումով հատկապես ագրոպարենային ոլորտի կազմակերպություններում կառավարչական հաշվառման սկզբունքների ու համակարգերի ներդրումը, դրանց հենքի վրա ներքին վերահսկողական ընթացակարգերի օպտիմալացումը կարևոր նշանակություն ունեն:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է նկարագրված խնդիրների քննարկմանն ու դրանց լուծումների առաջադրմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է հետազոտել ՀՀ ագրոպարենային ոլորտում գործող կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների կառավարչական հաշվառման հիմնախնդիրները և մշակել ու ներկայացնել մոտեցումներ՝ ներքին վերահսկողության բարելավման ու կառավարչական արդյունավետ որոշումների կայացման համար:

Նշված նպատակի իրագործմամբ պայմանավորված աշխատանքում առաջադրվել է խնդիրների հետևյալ շրջանակը.

- ուսումնասիրել և վերլուծել կառավարչական հաշվառման տեսամեթոդական հիմքերը և գործառույթների շրջանակը ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում,
- հետազոտել ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվետվողականության միջազգային փորձը և ժամանակակից մոտեցումները,
- բացահայտել և հիմնավորել կառավարչական հաշվառման վերահսկողական գործառույթների ընդլայնման թիրախային ուղղությունները,

- մշակել ներտնտեսական կառավարչական հաշվառման մոտեցում, դրա օգնությամբ բարելավել նախահաշվային ու փաստացի ցուցանիշների շեղումների վերահսկողությունը,
- մշակել և ներկայացնել փոխկապակցված կազմակերպություններում կառավարչական ներխմբային հաշվառման մոտեցում, դրա օգնությամբ բարելավել ֆինանսական արդյունքների վերահսկողությունը,
- մշակել, ներկայացնել և հիմնավորել կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվառման և հաշվետվողականության մոտեցումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտ է ՀՀ ագրոպարենային համակարգը, մասնավորապես՝ գյուղատնտեսական հումքը վերամշակող կազմակերպությունները, իսկ առարկան՝ այդ կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության բարելավման հիմնախնդիրները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

- մշակվել է կառավարչական հաշվառման մոտեցում՝ հիմնված ներտնտեսական պատասխանատվության կենտրոններում ծախսումների գնահատման, վերլուծության և համապատասխան հաշիվների ու հաշվետվությունների ցուցանիշների կիրառության վրա, նպատակ ունենալով բարելավել նախահաշվային ու փաստացի ցուցանիշների շեղումների հաշվառումն ու վերահսկողությունը,
- տեսական և գործնական տեսանկյուններից հիմնավորվել է փոխկապակցված կազմակերպություններում կառավարչական ներխմբային հաշվառման մոտեցում՝ յուրաքանչյուր կազմակերպություն դիտարկելով որպես եկամուտների ձևավորման առանձին պատասխանատվության կենտրոն, որն ուղղված է խմբի ֆինանսական արդյունքների վերահսկողության բարելավմանը,

- մշակվել և առաջարկվել է կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման մոտեցում՝ ուղղված ոչ ֆինանսական հաշվետվությունների դերի բարձրացմանը և ներքին վերահսկողության տեղեկատվական ապահովվածության բարելավմանը:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ատենախոսությունը ՀՀ ագրոպարենային ոլորտի կազմակերպություններում իրականացվող կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության զարգացման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված հետազոտություն, որը ներառում է որոշակի ընդհանրական առաջարկություններ՝ ուղղված կառավարչական հաշվառման ու ներքին վերահսկողության բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, հեղինակի կատարած առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ ագրոպարենային ոլորտում իրականացվող կառավարչական հաշվառման գործառույթներում՝ նպաստելով կազմակերպությունների ներքին վերահսկողության գործիքակազմի բարելավմանը, ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքերի ձևավորման գործընթացի արդյունավետության գնահատմանը, տնտեսական գործունեության մրցակցային ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլվել են հեղինակի 9 հրապարակումներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ ***«Ագրոպարենային համակարգի կազմակերպություններում կառավարչական հաշվառման տեսամեթոդական հիմքերը»*** գլխում վերլուծվել

են ագրոպարենային համակարգում կառավարչական հաշվառման զարգացման ընթացքը, դիտարկվել է համակարգում կառավարչական հաշվառման գործառույթների շրջանակը, նաև՝ ուսումնասիրվել է ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվետվողականության միջազգային փորձը:

Երկրորդ՝ ***«Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության փոխառնչությունը»*** գլխում քննարկվել են կառավարչական հաշվառման համակարգում ներքին վերահսկողության կարգավորման հիմնախնդիրները, ուսումնասիրվել են կառավարչական հաշվառման վերահսկողական գործառույթների ընդլայնման թիրախային ուղղությունները:

Երրորդ՝ ***«Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության բարելավմանուղիները»*** գլխում դիտարկվել են ներտնտեսական պատասխանատվության կենտրոններում կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության բերալավման ուղիները, քննարկվել է փոխկապակցված կազմակերպություններում ֆինանսական արդյունքների վերահսկողության բարելավումը, նաև ուսումնասիրվել են կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվառման բարելավման ուղիները:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են հեղինակի առաջարկությունները՝ միտված ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Հետազոտությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1) 1.2 ենթագլխում, ի թիվս այլ հարցերի, խոսվում է նաև ՀՀ ագրոպարենային ոլորտի կազմակերպություններում կառավարչական հաշվվառման խնդիրների մասին: Այս բաժնում աշխատանքի շարադրանքից հստակ չի երևում, թե ներկայացվող խնդիրները ի՞նչ ուսումնասիրության արդյունքում են վերհանվել, կազմակերպությունների ի՞նչ ծավալի և ընդգրկվածության ընտրանք է դիտարկվել:
2) 3.2 բաժնում խոսվում է տրանսֆերտային գնագոյացման, դրա ներդրման կարևորության մասին: Չթերագնահատելով սույն մեխանիզմի առավելությունները, կարծում ենք փաստարկների հաշվեկշռվածությունն

ապահովելու համար անհրաժեշտություն կար զուգահեռաբար մանրակրկիտ վերլուծության ենթարկելու նաև սույն մեխանիզմի ներդրման հնարավոր խնդիրներն ու ռիսկերը:

3) 3.3 ենթագլխում արդարացիորեն կարևորելով կառավարչական հաշվառման բարելավման տեսանկյունից ոչ ֆինանսական տեղեկատվության դերն ու նշանակությունը, ցանկալի կլիներ ներկայացնել այդպիսի տեղեկատվության ստացման, հաշվառման եղանակների, ցուցիչների հնարավոր շրջանակի վերաբերյալ ավելի համակարգված և խորքային վերլուծություն:

4) Եզրակացություններ բաժինը կատարված հետազոտության և ստացված արդյունքների համեմատությամբ բավականին ծավալուն է: Դրանում, ի հավելումն հեղինակային հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների, տեղ են գտել նաև հայտնի իրողությունների, տեսական փաստերի մեջբերումներ, ինչը կարծում ենք անհարկի ծանրաբեռնել է հետազոտության այս կարևորագույն մասը:

Նշված դիտողությունները, կարծում ենք, էապես չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա, և ավելի շուտ գալիք հետազոտությունների թիրախայնության բարձրացմանն են միտված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով շարադրվածը, կարելի է արձանագրել, որ հետազոտությունում արծարծվել են արդիական խնդիրներ, որոնց լուծման համար առաջադրված մոտեցումները կարող են կիրառվել ագրոպարենային ոլորտի կազմակերպություններում կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողական համակարգերի բարելավման համար: Ատենախոսությունը ինքնուրույն և պատշաճ մակարդակով կատարված գիտական աշխատանք է, որտեղ դրված են ոլորտի համար կարևոր խնդիրներ, ներկայացված են դրանց լուծման մոտեցումներ:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 9 հոդվածներում ընդհանուր առմամբ արտացոլված են գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ **Ա. Է. Մեժլումյանի «Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում (Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի նյութերով)»** թեմայով ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Արմինե Էդվարդի Մեժլումյանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա. Մ. Քթոյան**

09.11.2020թ.

Ա.Մ. Քթոյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտ.քարտուղար **Ն.Հ.Դարբինյան**